Հավելված N 1
ՀՀ կառավարության 2015 թվականի
հոկտեմբերի 15-ի N 1200 -Ն որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՋՈՀԵՐԻ ՆՈՒՅՆԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով կարգավորվում են մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) գործունեության հետ կապված հարաբերությունները:

2. Սույն աշխատակարգի հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության, գործընկեր հասարակական կազմակերպությունների կողմից (այսուհետ՝ իրավասու մարմիններ) իրականացնել նախանույնացման փուլում գտնվող հավանական զոհերի նույնացումը, տալ նրանց զոհի կամ հատուկ կատեգորիայի զոհի կարգավիճակ և իրավունք՝ ստանալու համապատասխանաբար զոհերի կամ հատուկ կատեգորիայի զոհերի համար նախատեսված աջակցություն և պաշտպանություն, անկախ մարդկանց թրաֆիքինգին կամ շահագործմանն առնչվող քրեադատավարական գործընթացում այդ անձանց մասնակցության հանգամանքից կամ այդ գործընթացում նրանց կարգավիճակից:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3. Հանձնաժողովը՝

1) համագործակցում է պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ՝ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հավանական զոհերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման նպատակով.

2) հավաքագրում է անձի՝ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված լինելը հավաստող կամ հերքող տեղեկություններ, փաստեր, ապացույցներ.

3) քննության է առնում իրավասու մարմինների միջնորդությունները, ինչպես նաև հատուկ կատեգորիայի զոհերի և հատուկ կատեգորիայի հավանական զոհերի օրինական ներկայացուցիչների առաջարկություններն ու առարկությունները.

4) կայացնում է անձի վերաբերյալ հետևյալ որոշումները՝

ա. համարել արժանահավատ, որ անձը ենթարկվել է մարդկանց թրաֆիքինգի և (կամ) շահագործման և ճանաչել նրան զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ,

բ. համարել ոչ արժանահավատ, որ անձը ենթարկվել է մարդկանց թրաֆիքինգի և (կամ) շահագործման,

գ. երկարաձգել նախանույնացման փուլը մինչև նախանույնացման համար օրենքով սահմանված ժամկետների ավարտը.

5) ընդունում է որոշումներ զոհերին և հատուկ կատեգորիայի զոհերին աջակցությունը դադարեցնելու մասին.

6) ուղղորդում է հանձնաժողովի կողմից մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված անձին աջակցություն և պաշտպանություն իրականացնող մարմիններ (կազմակերպություններ):

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Հանձնաժողովի նախագահը և անդամները հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում են հասարակական հիմունքներով:

5. Հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով: Յուրաքանչյուր նիստի ավարտից հետո կազմվում է նիստի արձանագրություն, որն ստորագրում են հանձնաժողովի նախագահը և անդամները:

6. Հանձնաժողովի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության՝ հանձնաժողովի նախագահի, կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի նախաձեռնությամբ և (կամ) իրավասու մարմնի միջնորդությամբ: Նիստ հրավիրելու նախաձեռնությունը (միջնորդությունը) ներկայացվում է հանձնաժողովի նախագահին նախապես:

7. Եթե հանձնաժողովի անդամներից որևէ մեկը չի կարող մասնակցել նիստի աշխատանքներին, ապա նրան փոխարինում է հանձնաժողովի պահեստային կազմի համապատասխան անդամը:

8. Հանձնաժողովի նիստին, ըստ անհրաժեշտության, խորհրդատուի կարգավիճակով կարող են մասնակցել հոգեբաններ, մանկավարժներ և այլ մասնագետներ:

9. Հանձնաժողովի նիստերին հատուկ կատեգորիայի հավանական զոհերի օրինական ներկայացուցիչների, մանկավարժի կամ մանկական հոգեբանի, իսկ հատուկ դեպքերում (եթե անձը հոգեկան խանգարման հետևանքով զրկված է իր արարքի բնույթն ու նշանակությունն ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից) հոգեբույժի ներկայությունը պարտադիր է:

10. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասար բաշխման դեպքում, եթե համընկել են հանձնաժողովի անդամ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների դիրքորոշումները, նախապատվությունը տրվում է հասարակական կազմակեր-

պությունների ներկայացուցիչների դիրքորոշմանը, այլապես ձայների հավասար բաշխման դեպքում որոշիչ է հանձնաժողովի նախագահի ձայնը:

11. Հանձնաժողովի որոշումներն ստորագրվում են հանձնաժողովի նախագահի և անդամների կողմից: Մարդուն զոհի կամ հատուկ կատեգորիայի զոհի կարգավիճակ տալու մասին հանձնաժողովի որոշման քաղվածքի մեկական օրինակ տրվում է նույնացված զոհին կամ հատուկ կատեգորիայի զոհին և նախանույնացումն իրականացրած իրավասու մարմնին: Հանձնաժողովի մասնակիցների առարկությունների և առաջարկությունների մասին հայտարարությունները, եթե այդպիսիք եղել են, արտացոլվում են նիստի արձանագրությունում:

12. Հանձնաժողովի նախագահի (անդամի)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու անհնարինության կամ մեկ տարվա ընթացքում հանձնաժողովի նիստերի ավելի քան կեսին անհարգելի չներկայանալու դեպքում, հանձնաժողովի քննարկմանն է ներկայացնում վերջինիս փոխարինման հարցը: Հանձնաժողովի համապատասխան որոշման առկայության դեպքում հանձնաժողովում սահմանված կարգով կատարվում է համապատասխան փոփոխություն:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

13. Հանձնաժողովի նախագահը՝

1) ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները և վարում է հանձնաժողովի նիստերը.

2) իր կամ հանձնաժողովի անդամների նախաձեռնությամբ կամ իրավասու մարմինների միջնորդությունների հիման վրա հանձնաժողովի նիստ հրավիրելու անհրաժեշտության մասին իրազեկում ստանալուց հետո երկօրյա ժամկետում հրավիրում է հանձնաժողովի նիստ.

3) որոշում է հանձնաժողովի նիստի անցկացման օրը, ժամը, տեղը, նիստի օրակարգը և հարցերի քննարկման հերթականությունը.

4) որոշում է հանձնաժողովի նիստերին հրավիրվող անձանց կազմը.

5) որպես հանձնաժողովի անդամ՝ քննարկվող հարցերի շուրջ ներկայացնում է բանավոր կամ գրավոր կարծիք, մասնակցում է քվեարկություններին, հանդես գալիս առաջարկություններով և առարկություններով.

6) հաստատում է հանձնաժողովի նիստի որոշումները և ստորագրում արձանագրությունները.

7) իրավասու մարմիններից ստանում է տեղեկատվություն և յուրաքանչյուր կիսամյակ, մինչև հաջորդող ամսվա 15-ը, խորհուրդ է ներկայացնում միասնական հաշվետվություն կատարված աշխատանքների և ծախսերի մասին.

8) իրականացնում է հանձնաժողովի որոշումներից և սույն կարգով սահմանված հանձնաժողովի լիազորություններից բխող այլ գործառույթներ:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

14. Հանձնաժողովի անդամները՝

1) մասնակցում են հանձնաժողովի նիստերին.

2) իրենց նախաձեռնությամբ միջնորդում են հրավիրել հանձնաժողովի նիստ.

3) հանձնաժողովի քարտուղարին տրամադրում են անհրաժեշտ նյութեր.

4) իրականացնում են հանձնաժողովի որոշումներից և սույն աշխատակարգով սահմանված հանձնաժողովի լիազորություններից բխող այլ գործառույթներ.

5) քննարկվող հարցերի շուրջ ներկայացնում են իրենց կարծիքը, մասնակցում են քվեարկություններին, հանդես են գալիս առաջարկություններով և առարկություններով.

6) ծանոթանում են հանձնաժողովի նիստի արձանագրություններին և ստորագրում դրանք:

VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

15. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ կազմակերպում է հանձնաժողովի աշխատանքները.

2) նախապատրաստում է հանձնաժողովի օրակարգը՝ նշելով օրակարգում նիստի անցկացման օրը, ժամը և տեղը.

3) նախապատրաստում է հանձնաժողովի անդամների, ինչպես նաև այլ մարմինների և կազմակերպությունների կողմից տրամադրված նյութերը.

4) նիստից առնվազն մեկ օր առաջ հանձնաժողովի անդամներին փոխանցում է նիստի օրակարգն ու քննարկվելիք նյութերը, այդ թվում՝ հավանական զոհի կամ հատուկ կատեգորիայի զոհի՝ նիստին մասնակից օրինական ներկայացուցչի մասին տեղեկատվությունը.

5) կազմում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, պատրաստում է որոշումների նախագծերը.

6) կատարում է հանձնաժողովի նախագահի՝ հանձնաժողովի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված այլ հանձնարարություններ.

7) իրականացնում է հանձնաժողովի որոշումներից և սույն աշխատակարգով սահմանված հանձնաժողովի լիազորություններից բխող այլ գործառույթներ:

VII. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

16. Հանձնաժողովի նիստի ավարտից հետո հանձնաժողովի քարտուղարը եռօրյա ժամկետում նախապատրաստում է արձանագրություն, որտեղ նշվում են նիստի անցկացման ամիսը, ամսաթիվը և վայրը, նիստն սկսելու և ավարտելու ժամերը, նիստի օրակարգը, մասնակիցների, հրավիրված անձանց տվյալները, քննարկվող հարցերի, զեկուցումների, ելույթների հիմնական դրույթները և յուրաքանչյուր հարցի վերաբերյալ ընդունած որոշումները:

17. Անձի՝ մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկվելն արժանահավատ համարելու մասին հանձնաժողովի որոշմամբ նրան տրվում է զոհի կամ հատուկ կատեգորիայի զոհի կարգավիճակ և իրավունք՝ ստանալու անհրաժեշտ աջակցություն և պաշտպանություն:

18. Հանձնաժողովի՝ անձին վերաբերող որոշման քաղվածքը հանձնաժողովի քարտուղարը հանձնում է թրաֆիքինգի և շահագործման զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված անձին կամ նրա օրինական ներկայացուցչին, և դրա մասին կատարում է համապատասխան գրառում հատուկ մատյանում՝ նշելով ստացողի անունը, ազգանունը, նրան աջակցող կազմակերպության անվանումը, ստանալու ամսաթիվը, ամիսը, տարեթիվը: Գրառման դիմաց դրվում է ստացողի ստորագրությունը: Մատյանի ձևը հաստատում է հանձնաժողովը:

19. Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի արձանագրության մեջ կատարում է համապատասխան գրառում աջակցությունը դադարեցնելու մասին՝ նշելով «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերով նախատեսված պատճառներից մեկը:

20. Հանձնաժողովի նիստերն անցնում են դռնփակ: Նիստերի արձանագրությունները, քննարկմանը ներկայացված փաստաթղթերը, նյութերը (ընօրինակները, պատճենները) հրապարակման ենթակա չեն և սահմանված կարգով պահվում են քննարկման օբյեկտ հանդիսացող անձի անձնական գործում՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի համապատասխան վարչությունում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2015 թվականի
հոկտեմբերի 15-ի N 1200 -Ն որոշման

Ձ Ե Վ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԶՈՀԵՐԻ ՆՈՒՅՆԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՈՒՐԴ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով խորհուրդ ներկայացվող հաշվետվությունն ունի երկու բաժին՝ նկարագրական և ծախսային, որոնցում պետք է ներառվի հետևյալ տեղեկատվությունը.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1) Հաշվետու ժամանակահատվածում նույնացման ներկայացված հավանական զոհերի թիվը.

2) նույնացման հանձնաժողովի գումարած նիստերը և քննարկվող հարցերը՝ ըստ «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի և 23-րդ հոդվածի 1-ին մասի.

3) նույնացման հանձնաժողովի որոշումների բովանդակությունը.

4) աջակցություն ստանալու նպատակով ուղղորդված զոհերի և հատուկ կատեգորիայի զոհերի թիվը.

5) ուղղորդումը (ըստ ուղղորդման մարմնի (կազմակերպության).

6) պաշտպանության համար ներկայացված միջնորդությունները և միջնորդության հիման վրա կայացրած որոշումները.

7) աջակցության ծրագրերը (պետական և ոչ պետական) ըստ ոլորտների՝

ա. սոցիալական պաշտպանության ոլորտ,

բ. կրթության ոլորտ,

գ. առողջապահության ոլորտ,

դ. պաշտպանության ոլորտ,

ե. օրենքով նախատեսված այլ ոլորտներ:

2. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԸ

NN ը/կ	ՈԼՈՐՏ	ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԸ
1.	Սոցիալական պաշտպանություն		
2.	Կրթություն		
3.	Առողջապահություն		
4.	Պաշտպանություն		
5.	Օրենքով նախատեսված այլ ոլորտներ		
			ԸՆԴԱՄԵՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ